



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

No. 903 Ա/Ք \_\_\_\_\_

04 հուլիսի, 2013 թ. \_\_\_\_\_

«ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2013» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ  
ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Կազմակերպել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացվող «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2013» մրցույթը:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս.Հարությունյանին:

Նախարար՝

Ա. ԱՇՈՏՅԱՆ

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը հայտարարում է բնական գիտությունների բնագավառում ֆիզիկա և աստղագիտություն, քիմիա, Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ և կենսաբանական գիտություններ մասնագիտություններով ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացվող «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2013» **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ մրցույթի մասին հայտարարության հրապարակման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայքում ([www.scs.am](http://www.scs.am)):

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությունում՝ աշխատանքային օրերին ժամը 14:00 - 17:00:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀՐԱՎԵՐ  
«ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԾՐԱԳԻՐ - 2013» ՄՐՑՈՒՅԹԻ**

1. Մրցույթն անցկացվում է համաձայն 2009 թվականի նոյեմբերի 15-ի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության միջև «Գիտատեխնիկական ոլորտում համագործակցության մասին» կնքված պայանագրի և 2010 թվականի նոյեմբերի 29-ի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության միջև կնքված «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության դրամաշնորհների տրամադրման մասին ծրագրի»:
2. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետև՝ Նախարարություն) բնական գիտությունների բնագավառում ֆիզիկա և աստղագիտություն (մասնագիտական դասիչը՝ 1.3.), քիմիա (մասնագիտական դասիչը՝ 1.4.), Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ (մասնագիտական դասիչը՝ 1.5.) և կենսաբանական գիտություններ (մասնագիտական դասիչը՝ 1.6.) մասնագիտություններով գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար մինչև 2 (երկու) տարի տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրի 3-4 անձից (ներառյալ խմբի գիտական խորհրդատուն և խմբի ղեկավարը) բաղկացած գիտահետազոտական խմբերի (այսուհետև՝ խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված գիտական թեմաների:
3. Խմբի գիտական խորհրդատուն պետք է հանդիսանա ՀՀ մշտական բնակիչ և դրամաշնորհի իրականացման ընթացքում պետք է բնակվի Հայաստանի

Հանրապետությունում: Խմբի մյուս անդամները (ներառյալ խմբի ղեկավարը) պետք է հանդիսանան ԼՂՀ մշտական բնակիչներ և դրամաշնորհի իրականացման ընթացքում պետք է բնակվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում:

4. Խմբի գիտական խորհրդատու կարող է հանդիսանալ գիտական աստիճան ունեցող անձը, ով ունի առնվազն հինգ տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին հինգ տարիների ընթացքում գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն հինգ հոդված:

5. Մրցույթի շրջանակներում որևէ անձ չի կարող ընդգրկվել մեկից ավելի հայտերում, ինչպես նաև մրցույթի արդյունքում ֆինանսավորվող մեկից ավելի գիտական թեմաներում: Հայտերում չեն կարող ընդգրկվել գիտական թեմայի իրականացման ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող թեմայի և «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր» դրամաշնորհի շնորհառուները:

6. Խմբում, որպես կանոն, պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ գիտաշխատող, կամ ասպիրանտ, կամ մագիստրոս:

7. Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել դիմում՝ լրացված խմբի ղեկավարի կամ գիտական խորհրդատուի կողմից, հավելված N1-ին համապատասխան և հայտ՝ հավելված N2-ի «Ձևերին» համապատասխան:

8. Հայտին, որպես կանոն, պետք է կցել այն կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի դրական կամ բացասական երաշխավորությունը, որտեղ կատարվելու է գիտական թեման:

9. Հայտը պետք է ներկայացնել մրցույթի մասին հայտարարության հրապարակման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

10. Հայտը Կոմիտե պետք է ներկայացնել խմբի ղեկավարի գրավոր դիմումով (հավելված N1)՝ անձամբ (աշխատանքային օրերին ժամը 10:00 - 13:00 և 14:00 - 17:00, Օրբելի 22, 708 սենյակ): Հավելված N2-ի «Ձևերը» ներկայացնել սուսնձված ծրարով:

11. Հայտը պետք է ներկայացնել հայերեն լեզվով՝ մեկ տպագիր և մեկ էլեկտրոնային տարբերակներով (ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե, Օրբելի եղբայրների 22 ներկայացնել խտասկավառակով կամ ուղարկել [info@scs.am](mailto:info@scs.am) էլեկտրոնային հասցեով):

12. Հայտի ղեկավարի ստորագրությունը պետք է լինի կազմակերպության գիտական քարտուղարի կամ ղեկավարի ստորագրությամբ հաստատված և կազմակերպության կնիքով վավերացված:

13. Հայտը պետք է ներկայացնել A4 ձևաչափի թղթի վրա տպված, 1.5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Unicode» տառատեսակով («Sylfaen»՝ հայերեն և «Times New Roman»՝ անգլերեն ու ռուսերեն տեքստերի համար)՝ պահպանելով աղյուսակների ամբողջականությունը: Էջերի բոլոր կողմերից պետք է թողնել 2.5 սմ լուսանցք և հաջորդաբար համարակալել ներքևի աջ անկյունում: Հայտի էլեկտրոնային տարբերակները պետք է ներկայացնել «Microsoft Word» ձևաչափով՝ մեկ ֆայլով, որը չպետք է գերազանցի 1.5MB-ը:

14. Հավելված N2-ի «Ձև 4»-ը կազմելիս օգտվել հայտի ֆինանսական նախահաշիվ ներկայացնելու ուղեցույցից (հավելված N3):

15. Խմբի անունից հանդես է գալիս միայն ղեկավարը:

16. Մրցույթին ներկայացված հայտերը բացվում են դրանց ընդունման վերջին օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին:

17. Կոմիտեն 5 աշխատանքային օրվա ընթացքում անցկացնում է հայտերի տեխնիկական ստուգում:

18. Մրցույթի հայտը չի քննարկվի, եթե այն.

- լրացված է ոչ ճիշտ կամ ոչ ամբողջությամբ,
- ներկայացված է «zip» և այլ սեղմված (մի քանի փաստաթուղթ պարունակող)

ձևաչափով,

- ուղարկված է ֆաքսով:

19. Տեխնիկական ստուգում անցած հայտերը տրամադրվում են մասնագիտական փորձագիտական խորհուրդներին (այսուհետև՝ խորհուրդ), որոնք 30 օրացուցային օրվա ընթացքում կազմակերպում են հայտերի գիտական փորձաքննությունը:

20. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն երկու փորձագետի կողմից: Յուրաքանչյուր հայտի համար փորձագետը լրացնում է Կոմիտեի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը՝ պատասխանելով դրանում առաջադրված բոլոր հարցերին:

21. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում է հայտի գիտական և գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում հետազոտական խմբի ձեռքբերումները, խմբի անդամների մասնագիտական որակավորման համապատասխանությունը թեման իրականացնելու համար, երիտասարդ (մինչև 35 տարեկան) մասնագետների ընդգրկվածությունը, թեմայի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը և գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններով պայմանավորված այլ դրույթներ:

22. Գիտական փորձաքննության գնահատման թերթիկի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է գնահատականի միջոցով, առավելագույնը՝ 5 միավոր, հետևյալ սանդղակով.

*0 միավոր* – հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկության բացակայության պատճառով,

*1 միավոր* – հարցի պատասխանը ներկայացված է մակերեսորեն և անորոշ,

*2 միավոր* – հարցի պատասխանը բավարար չէ ամբողջական կարծիք կազմելու համար,

*3 միավոր* – հարցի պատասխանը ընդհանուր առմամբ բավարարում է հարցի պահանջներին, բայց կան զգալի անհամապատասխանություններ, որոնք, սակայն, շտկելի են,

*4 միավոր* – հարցի պատասխանը որոշակի վերապահումներով համապատասխանում է առաջադրված պահանջներին,

*5 միավոր* – հարցի պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:

23. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականն է:

24. Երկու փորձագետների գնահատականները գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50 տոկոս և ավելի չափով տարբերվելու դեպքում հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում երրորդ փորձագետի կողմից: Այդ դեպքում, գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է:

25. Փորձագետներն ու գիտական փորձաքննությունը կազմակերպող անձինք հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկություններ չեն տրամադրում:

26. Հայտերի գիտական փորձաքննության վերջնաժամկետը լրանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեն գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր մասնագիտության համար (հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով) ձևավորում է վարկանիշային ցանկ ու ներկայացնում խորհուրդ՝ հաստատման:

27. Խորհուրդը 5 աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեի նախագահին է ներկայացնում հայտերի վերջնական վարկանիշային ցանկը՝ առաջնայնությունը տալով արդեն իսկ իրականացվող համագործակցության շրջանակներում ներկայացված հայտերին:

28. Կոմիտեն գիտական կազմակերպության ղեկավարի միջոցով հայտերի ղեկավարներին է տրամադրում հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականներն ու գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ մասնագիտության շեմային գնահատականը: Եթե հայտը ներկայացվել է անհատական նախաձեռնությամբ, ապա հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականն ու գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ մասնագիտության շեմային գնահատականը տրամադրվում են խմբի ղեկավարին:

29. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքվում է պայմանագիր խմբի ղեկավարի և կատարողների միջև, ինչպես նաև գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) և գիտական թեմայի ղեկավարի միջև («Ծառայությունների մատուցման պայմանագիր»):

30. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմայի ղեկավարի և գիտական խորհրդատուի միջև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքվում են պայմանագրեր՝ 29 կետում նշված պայմանագրերի առկայության դեպքում:

## Անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակ

<input type="checkbox"/> Դիմում
<input type="checkbox"/> Տիտղոսաթերթ («Ձև 1»)
<input type="checkbox"/> Նախագծի անոտացիա
<input type="checkbox"/> Նախագիծ
<input type="checkbox"/> Գիտական խորհրդատուի որակավորման տվյալները («Ձև 2.1»)
<input type="checkbox"/> Ղեկավարի որակավորման տվյալները («Ձև 2.2»)
<input type="checkbox"/> Տեղեկություններ նախագծի կատարողի մասին («Ձև 3»)
<input type="checkbox"/> Ֆինանսական նախահաշիվ («Ձև 4»)
<input type="checkbox"/> Ֆինանսական նախահաշվի մեկնաբանություն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ  
ՔԱՂԱՔԱՅԻ

\_\_\_\_\_ (անուն հայրանուն)  
\_\_\_\_\_ ից  
\_\_\_\_\_ (ազգանուն)  
\_\_\_\_\_ (հասցե)  
\_\_\_\_\_ (հեռախոս)

**Դ Ի Մ Ո Ւ Մ**

Խնդրում եմ ընդունել կից ներկայացվող հայտը՝ ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացվող «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2013» մրցույթին մասնակցելու համար:

Դիմող՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) \_\_\_\_\_ (անուն ազգանուն)

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2013 թ.

**ՀԱՅՏ**  
**«ԱՐՑԱՒԻ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2013» ՄՐՑՈՒՅԹԻ**

Հայտը հանձնված է «\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 2013թ.

Ծածկագիր՝ \_\_\_\_\_  
(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

**Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ**

**1. Հայտի**

- վերնագիրը (հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ 15 բառից ոչ ավելի)

\_\_\_\_\_

- բնագավառը \_\_\_\_\_

- մասնագիտական դասիչը \_\_\_\_\_

- բնույթը

տեսական


հիմնարար


փորձարարական

կիրառական

**2. Հուշող (բանալի) բառեր (հայերեն և անգլերեն լեզուներով)**

**3. Խմբի գիտական խորհրդատուի**

- ազգանունը, անունը, հայրանունը \_\_\_\_\_

- ծննդյան թիվը \_\_\_\_\_

- գիտական աստիճանը \_\_\_\_\_

- պաշտոնը \_\_\_\_\_

- հեռախոսը \_\_\_\_\_

- էլեկտրոնային հասցեն \_\_\_\_\_

**4. Գերատեսչությունը \_\_\_\_\_**

**5. Կազմակերպության լրիվ, կրճատ անվանումները և կազմակերպարարական ձևը (ՊՈԱԿ, ՓԲԸ, ԲԲԸ, ՍՊԸ և այլն) \_\_\_\_\_**

**6. Կազմակերպության հասցեն, հեռախոսը, ֆաքսը և էլեկտրոնային հասցեն \_\_\_\_\_**

**7. Հայտի ղեկավարի**

- ազգանունը, անունը, հայրանունը \_\_\_\_\_

- ծննդյան թիվը \_\_\_\_\_

- գիտական աստիճանը \_\_\_\_\_

- պաշտոնը \_\_\_\_\_
- հեռախոսը \_\_\_\_\_
- էլեկտրոնային հասցեն \_\_\_\_\_

8. Գերատեսչությունը \_\_\_\_\_
9. Կազմակերպության լրիվ, կրճատ անվանումները և կազմակերպարարական ձևը (ՊՈԱԿ, ՓԲԸ, ԲԲԸ, ՍՊԸ և այլն) \_\_\_\_\_
10. Կազմակերպության հասցեն, հեռախոսը, ֆաքսը և էլեկտրոնային հասցեն \_\_\_\_\_
11. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը \_\_\_\_\_ տարի
12. Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը և գիտական խորհրդատուն) անդամների թիվը \_\_\_\_\_
13. Աշխատանքի վարձատրության (ներառյալ գործատուի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները) գումարը \_\_\_\_\_ հազար դրամ
14. Վերադիր ծախսերի գումարը \_\_\_\_\_ հազար դրամ
15. Հայցվող ընդհանուր գումարը \_\_\_\_\_ հազար դրամ
16. Հայտի գիտական խորհրդատուի ստորագրությունը \_\_\_\_\_
17. Հայտի ղեկավարի ստորագրությունը \_\_\_\_\_
18. Կազմակերպության գիտական քարտուղարի (կամ ղեկավարի) ստորագրությունը \_\_\_\_\_

«\_\_\_\_» \_\_\_\_\_ 2013թ.

Կ.Տ.

# ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ\*

---

\* Համառոտ պարբերությամբ ներկայացնել նախագծի նպատակները՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով  
(300 բառից ոչ ավելի)

## ՆԱԽԱԳԻԾ\*

---

\* Ներկայացնել հայերեն լեզվով, մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը:

1. մինչև 8 էջի սահմաններում ներկայացնել խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, թեմայի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները
2. մինչև 2 էջի սահմաններում նշել տվյալ ուղղությամբ խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները
3. Օգտագործված գրականության ցանկը

# ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Ազգանուն, անուն, հայրանուն \_\_\_\_\_

(հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով)

2. Ծննդյան տարեթիվը \_\_\_\_\_

3. Կրթությունը (բուհ, մասնագիտություն) \_\_\_\_\_

4. Գիտական աստիճանը \_\_\_\_\_

5. Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը \_\_\_\_\_

6. Հրատարակված

- գիտական հոդվածներ (թիվը) \_\_\_\_\_

- մենագրություններ (թիվը) \_\_\_\_\_

7. Արտոնագրեր (թիվը) \_\_\_\_\_

8. Լիցենզիաներ (թիվը) \_\_\_\_\_

9. Սկսած 2008 թվականից՝ հրատարակված գիտական հոդվածները (նշել հեղինակները, վերնագիրը,

ամսագիրը, տարին, հատորը, էջերը)

1) \_\_\_\_\_

2) \_\_\_\_\_

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

10. Ստացված օտարերկրյա դրամաշնորհները

1) \_\_\_\_\_

2) \_\_\_\_\_

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2013թ.

\_\_\_\_\_  
(գիտական խորհրդատուի ստորագրությունը)

## ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Ազգանուն, անուն, հայրանուն \_\_\_\_\_  
(հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով)
2. Ծննդյան տարեթիվ \_\_\_\_\_
3. Կրթությունը (բուհ, մասնագիտություն) \_\_\_\_\_
4. Գիտական աստիճանը \_\_\_\_\_
5. Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը \_\_\_\_\_
6. Հրատարակված

- գիտական հոդվածներ (թիվը) \_\_\_\_\_

- մենագրություններ (թիվը) \_\_\_\_\_

7. Արտոնագրեր (թիվը) \_\_\_\_\_

8. Լիցենզիաներ (թիվը) \_\_\_\_\_

9. Սկսած 2008 թվականից՝ հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարին,

հատորը, էջերը)

1) \_\_\_\_\_

2) \_\_\_\_\_

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

10. Ստացված օտարերկրյա դրամաշնորհները

1) \_\_\_\_\_

2) \_\_\_\_\_

(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2013թ.

\_\_\_\_\_ (ղեկավարի ստորագրությունը)

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ՝**

Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (անգլերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (ռուսերեն)	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը	
Կրթությունը (թուի, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (աշխատանքային, տան, բջջային)	
Էլեկտրոնային հասցե	
Նախագծի հետ առնչվող հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը), 5-ից ոչ ավելի	
1. 2.	

\* Լրացվում է յուրաքանչյուր կատարողի համար



## ՀԱՅՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ\*

Հայտի ծածկագիրը \_\_\_\_\_  
 (լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

<b>ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ</b> (ներառյալ եկամտային հարկը)									
ազգանուն անուն հայրանուն	2013			2014			2015		
	գոհուողոց	Սիլոդոժ վերջով	Սևրոս Սևրոսի ճյուղով	գոհուողոց	Սիլոդոժ վերջով	Սևրոսի ճյուղով	գոհուողոց	Սիլոդոժ վերջով	Սևրոսի ճյուղով
1)									
2)									
3)									
4)									
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ</b>									
<b>ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այլ թվում</b>									
<b>1. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ</b> (թվարկել 100000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը, հիմնավորվել նախահաշվի մեկնաբանության մեջ)							2013	2014	2015
1)									
2)									
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ</b>									
<b>2. ԳՈՐԾՈՂՈՒՄՆԵՐ</b> (հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ)							2013	2014	2015
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր									
2) տեղական գործուղումների օրապահիկ									
3) տեղական գործուղումների գիշերավարձ									
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր									
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ									
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ									
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)									
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ</b>									
<b>ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ</b>									
<b>ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ</b>									
<b>ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ</b> (ներկայացնել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)									

Հայտի գիտական խորհրդատու՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) \_\_\_\_\_ (ազգանուն, անուն, հայրանուն)

Հայտի ղեկավար՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) \_\_\_\_\_ (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության ղեկավար՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) \_\_\_\_\_ (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ \_\_\_\_\_ (ստորագրություն) \_\_\_\_\_ (ազգանուն, անուն, հայրանուն)

Կ.Տ.

\* Օգտվել հայտի ֆինանսական նախահաշիվ ներկայացնելու ուղեցույցից (հավելված N4)

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ\*

---

\* Բացատրել և հիմնավորել ֆինանսական նախահաշվի բոլոր կետերը

**Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց**  
ՀԱՅՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Ֆինանսական նախահաշիվը պետք է ներկայացնել առանձին տարիների համար՝ պահպանելով ընդհանուր գումարի միևնույն չափը:
2. Դրամաշնորհի առավելագույն տարեկան գումարը կազմում է.
  - 4 անձից բաղկացած խմբի համար՝ 4 600 000 (չորս միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ,
  - 3 անձից բաղկացած խմբի համար՝ 3 450 000 (երեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
3. Ֆինանսական նախահաշվի «Աշխատանքի վարձատրություն» հոդվածը կազմելիս պետք է խմբի անդամի աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափն ընդունել 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ:
4. Աշխատանքի վարձատրության համար նախատեսվող առավելագույն տարեկան գումարը չպետք է գերազանցի.
  - 3 360 000 (երեք միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ 4 անձից բաղկացած խմբի համար,
  - 2 520 000 (երկու միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամը՝ 3 անձից բաղկացած խմբի համար:
5. Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել հետազոտական սարքավորումների և գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող այլ նյութերի ձեռքբերման ծախսեր: 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամը գերազանցող սարքավորման կամ ծառայության անհրաժեշտությունը պետք է հիմնավորել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ:
6. Ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա գիտական միջոցառումներին մասնակցելու համար և չպետք է գերազանցի դրամաշնորհի ընդհանուր գումարի 20 տոկոսը: Գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերը պետք է հիմնավորել ֆինանսական նախահաշվի

մեկնաբանության մեջ: Մինչև երկու շաբաթ տևողության գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձը պետք է հաշվարկել ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար գիտական թեմայի կատարողները կարող են հայցել ամսական մինչև 2000 (երկու հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Դրամաշնորհի տարեկան կտրվածքով օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը:

7. Ֆինանսական նախահաշվի «Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսվում է գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) իրավասությանը թողնված թեմայի ֆինանսավորման տոկոսը, որով տնօրենը (ռեկտորը) ապահովում է գիտական կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ: Վերադիր ծախսերը չպետք է գերազանցեն դրամաշնորհի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված գումարի 8 տոկոսը:

8. Գիտական թեմայի կատարման անհրաժեշտությունից ելնելով՝ գիտական թեմայի ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով հատկացված գումարը, Կոմիտեի համաձայնությամբ, կարող է վերաբաշխվել տարեկան մեկ անգամ՝ դրա 10 տոկոսի չափով: